## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ**

**18 հունիսի 2020 թվականի N 145-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1708-Ն որոշման հավելվածի 4-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման, հսկողության, մշտադիտարկման և ավարտի փաստագրման ձև»-ի 6-րդ կետը՝

**որոշում եմ.**

1. Սյունիքի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման հսկողության եվ մշտադիտարկման նպատակով ստեղծել ոլորտային մասնագետներից բաղկացած մշտադիտարկման աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Ռազմիկ Ավետիսյան | - | մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ, |
| Սարիկ Աղաբեկյան | - | մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, |

Հայկ Կարախանյան - մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ,

Սամվել Աղալոյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝ իրականացնել սուբվենցիայի ծրագրերով կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության այցելություններ՝ ամիսը 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար և յուրաքանչյուր ուսումնասիրությունից հետո ներկայացնել ամփոփ հաշվետվություն:

18.06.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հունիսի 18
ք. Կապան